ԽՈՍՔ ՈՂՋՈՒՅՆԻ

Ամենայն Հայոց շինարար կաթողիկոս Վազգեն Ա-ին

Որքան ուրախ կզգանք մենք զմեզ,
Երբ որ կտեսնենք այսօր մեր մեջ Քեզ.
Ով Դու սրբացյալ հայոց հայր արի,
Կողջունենք սրտանց գալուստդ բարի:

Ծերունազարդ սուրբ, անձնվեր էակ
Էությամբդ բարի, սեր ես Դու համակ.
Վսեմ գահակալ, պաշտպան հայ գահին,
Կյանքդ մեզ համար շատ է թանկագին:

Դու մեր մեծ ազգին զավակ ոսկեծին
Ու խաղաղության անքիծ աղավնին.
Ամենայն հայոց փառքը, սիրելին,
Դու ես մեզ համար նվեր երկնային:

Լույս ես մշտավառ, կյանքի կայծ անշեջ,
Հայրենիքն ամբողջ կտեսնենք Քու մեջ.
Դու երկար ապրե և կյանք տուր հային,
Ան հույժ կարոտ է Քու ջերմ խնամքին:

Ով քաջ Հայրապետ Ամենայն Հայոց,
Վազգեն Առաջին, սրբություն սրբոց.
Կմաղթե Քեզ կյանք երկար, քաջառողջ,
Աշխարհով ցրված հայությունն ամբողջ:

ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ

Մոնրեալ,
29 սեպտ. 1987 թ.

ՎԵՀԱՓԱՌՆ Է...

Վեհափա՞ռն է, ահա նորեն
Այցի կու գա աստվածակոխ սուրբ վայրերեն,
Այցի կու գա իր ցիրուցան զավակներուն,
Գորովագութ սիրտն իր, սիրո օվկիան անհուն,
Սեր մը՝ հորդուն, համապարփակ ու տարածուն...:

Վեհափա՞ռն է, կու գա նորեն,
Իր թևերը մեյ-մեկ լուսո ամպ հրեղեն...
Ժըպիտն անուշ Իր աչքերուն, ներհուն, խոհուն,
Ձայնն իր նեկտար, զերթ ջինջ, զուլալ գետ վարարուն,
Մեզ առինքնող, մեզ հըմայող ի՞նչ վեհ Անուն...: